

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 23 » մարտ 2023թ. No 1496 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» N
5160-Ա, 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 06-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ» N 550-Ա, 2023
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 03-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԴԵՂԵՐԻ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ՄԱՍԻՆ» N 1047-Ա, 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 9-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» N
1168-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի N 01/707-23 առ 20.03.2023թ. գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1.2022 թվականի նոյեմբերի 3-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» N 5160-Ա հրամանի հավելվածի *Խոֆիպոլ լուծույթ ներքին ընդունման* դեղի N 20973 գրանցման հավաստագրի «Արտադրողը» կետի «*Լաբորատորիես ԳԱԼԵՆԻՔՍ ՎԵՐՆԻՆ, 20 ունե Լուի-Շառլ Վերնին, 77190 Դամարի-Լես-Լիս, Ֆրանսիա*» բառերը փոխարինել «*Լաբորատորիես ՄԱՅՈԼԻ ՍՊԻՆԴԼԵՐ, 6 ավենյու դե լ' Եուրոպ, 78400 Շապո, Ֆրանսիա*» բառերով,

2.2023 թվականի փետրվարի 06-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ» N 550-Ա հրամանի հավելվածի համաձայն գրանցված *Ֆորքսիզա* դեղի N 19132 գրանցման հավաստագրի «Գրանցման հավաստագրի համարը» կետի «19132» բառը փոխարինել «19132/1/1» բառով,

3.2023 թվականի մարտի 03-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ» N 1047-Ա հրամանի հավելվածի համաձայն գրանցված *Ավամիս* դեղի N 20107/1/1 գրանցման հավաստագրի «Գրանցման հավաստագրի իրավատերը» կետի «*ԳլաքսոՍմիթԿլայն (Իռլանդիա) Լիմիտեդ, 12 Ռիվերվուդ, Սիրթիվեստր Բիզնես Կամպուս, Դուբլին 24, Իռլանդիա*» բառերը փոխարինել «*ԳլաքսոՍմիթԿլայն ՄԹ Լիմիտեդ, 980 Գրեյթ Ուեստ 6., Բրենսֆորդ, Միդլսեքս S48 9ԳՍ, Միացյալ Թագավորություն*» բառերով,

4.2023 թվականի մարտի 9-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» N 1168-Ա հրամանի հավելվածի *Լինեսթար* (ԳՀ 21171) դեղի «Արտադրողը» կետի «*Ակոլայֆ Հեյթբեյր Փրայվիթ Լիմիտեդ, Յունիթ-5, ԻԴՊ, Վիլեջ-Սաչանա, Տալ.-Վիրամգամ, Ահմեդաբադ շրջան, Գուջարատ, 382150, Հնդկաստան*» բառերը փոխարինել «*Ակոլայֆ Հեյթբեյր Փրայվիթ Լիմիտեդ, Վիլեջ-Սախանա, Տալ.-Վիրամգամ, Ահմեդաբադ շրջան, Գուջարատ, 382150, Հնդկաստան*» բառերով:

Ընդունել թվով 4 հրամաններում փոփոխությունները:

5.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի, բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին:

6.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Ա.Բաղդյանին՝

1) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել լրամշակման կատարումը գրանցամատյանում, լիազոր մարմնի հաստատված կարգով, նշելով փոփոխության տիպը և ընդունման ամսաթիվը:

7.Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել նշված դեղերի վերաձևակերպված հավաստագրերի տրամադրումը հայտատուներին:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

 Recoverable Signature

X 

ԱՐՄԵՆ ՆԱԶԱՐՅԱՆ

Signed by: NAZARYAN ARMEN 3712760329

ԱՐՄԵՆ ՆԱԶԱՐՅԱՆ